Գինը 1 ռուբլի

ԴՐՕՇԱԿ

Ամսագիր

1905 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պետերբուրգ, 5 | 18 Յունուարի

Բանւորական շարժումը սկսեց Պուտիլովի գործարանից և Ֆետզհետ տարածուց մի քանի գործարաններում: Ստիեգլից գործարանի բանւորներն ևս, թւով 8 հազար, միացան գործադուլին: Նրանք պահանջում են 8 ժամւայ աշխատանք: Խօսք կայ և քաղաքական ռեֆորմների մասին:

Պարիզ, 6 | 19 Յունուարի

Պետերբուրգում սպասւում են լուրջ դէպքեր: Գործադուլին մասնակցողների թիւը կարող է հասնել 100 հազարի: Կառավարութիւնը, երկիւղի մէջ, շտապում է միջոցներ ձեռք առնել: Ոստիկանութիւնը ոտքի վրայ է: Զօրանոցներում զինւորները պատրաստ վիճակի մէջ: Յատուկ միջոցներ են ձեռք առնւած Ձմերային պալատը պահպանելու համար, ուր խմբւած և ապաստանած է կայսերական ընտանիքը:

Պետերբուրգ, 6 | 19 Յունուարի

Այսօր տեղի ունեցաւ բանւորների մի մեծ ժողով, մասնակցութեամբ յեղափոխական խմբերի: Ժողովը մերժեց այն ծրագիրը, որով առաջարկւում էր՝ ոչնչացնել կառավարական կազմը ամբողջապէս: Ընդունւեց մի առաջարկ, որի նպատակն է պահանջել մամուլի և խօսքի ազատութիւն:

Պետերբուրգ, 7 | 20 Յունուարի

Գործադուլին մասնակցող բանւորական բոլոր խմբերը պատրաստել են մի «նդրագիր՝ ուղղած կայսրին, որով պահանջում են՝ վերջ տալ անարդար ճնշումներին, ազգաբնակչութեան վրայ ծանրացած թշւառութեան, ինչպէս և կապիտալիստների ֆորսահարութեան: Բանւորների գլխաւոր պահանջներն հետևեալներն են՝ 1. Ընդհատի ապահովութեան երաշխաւորութիւն: 2. Խօսքի ազատութիւն, համախմբւելու իրաւունք, խղճի ազատութիւն: 3. Պարտադիր ուսում՝ պետութեան ծախքով: 4. Ժողովրդական ներկայացուցչութիւն, քաղաքի ընտրողութեամբ: 5. Մինիստրների պատասխանատուութիւն: 6. Հարկային սիստեմի հիմնական բարեկարգում: Խնդրագիրը յատկապէս բանւորների համար պահանջում է՝ 8 ժամեայ աշխատանք և բանւորների տգիտութեան դէմ:

Պետերբուրգ, 7 | 20 Յունուարի

Գործադուլը և յուզմունքը արագօրէն տարածւում են: Սոն, Դ՝Ալլի, Պուտիլովի և այլ շատ գործարաններ փակւեցին: Մտաւորականն շրջանները ևս ունեն շարժման մէջ: Լուր կայ, որ 100 հազար բանւորներ պատրաստւում են մի ցոյց պալատի դիմաց. բանւորական մի ուղերձ՝ ուղղած թագաւորին, վերջանում է այս խօսքերով. «Խղճացիր մեզ, թող որ ապրենք. եթէ դու մեզ պահես այժմեան վիճակի մէջ, մենք գերագաստ ենք մեռնել»: Հաստատւում է, որ Ջրօրհնէքի օրը Ձմերային պալատի վրայ թնդանօթ արձակելը քաղաքական բնոյթ ունի:—Ներքին գործերի և ֆինանսների մինիստրները հրաժարեցին ընդունել գործադուլ անողների ներկայացուցիչներին: Կարծում են, որ այդ մերժումը շարժմանը կը տայ հակայական կերպարանք: Լուր կայ, որ երկու օրից յետոյ ընդհանուր գործադուլ պիտի յայտարարւի: Բանւորական մի քանի խմբեր Վասիլևսկի-Օստրովում արդէն սկսել են ցոյցեր անել: Զօրքը անգթութեան նշաններ է ցոյց տալիս:

Լոնդոն, 7 | 20 Յունուարի

Զինարանների մէջ գործադուլը ընդհանուր կերպարանք է ընդունում: Կարծում են, որ շուտով անկարելի պիտի լինի պաշտօնական թղթերի առաքումը շարունակել: Ճնւած է Կիրակի օր գնալ Ձմերային պալատը, պահանջել, որ ցարը երևայ ժողովրդին և անձամբ ընդունի բանւորների ուղերձը: Բանւորները ասում են՝ «Մենք պատրաստ ենք մեռնել պալատի առջև և մինչև վերջին րոպէն պիտի պահանջենք, որ կայսրը դուրս գայ և լսի մեզ»: Վասիլևսկի-Օստրովի մէջ ընդհարումներ տեղի ունեցան գործաթողների և դեռ աշխատող բանւորների միջև: Քաղաքի մի քանի կէտերում էլէքտրական լուսաւորութիւնը ընդհատւած է: Ոստիկանական իշխանութիւնը հրատարակեց մի շրջաբերական, որով արգելում է փողոցային համախմբումները: Շատ տպարաններ չեն բանում: Կարծում են, որ վաղը լրագիրները անկարող կը լինեն լոյս տեսնել: Մինչև ուրբաթ երեկոյ փակւած գործարանների թիւը 195 էր: Մոսկվայից յայտնւեց հատուկ մի պատգամաւորութիւն, որը եկել է խնդրելու կայսրին՝ վերջ տալ պատերազմին, որ սպառնում է կործանել ամբողջ Ռուսաստանը:

Լոնդոն, 7 | 20 Յունուարի

Ամբողջ պահակազօրքը ոտքի վրայ է: Գաղի գործարանը, ինչպէս և պետական բանկը զինւորական հսկողութեան ներքոյ է: Մայրաքաղաքի մեծագոյն մասը ընկղմւած է խաւարի մէջ: Ահագին քանք են թափւում՝ էլէքտրականութեան մի քանի գործարանների աշխատանքը վերսկսելու համար: Ձմերային պալատի շրջակայքը պաշտպանելու համար՝ ոտքի են հանւած

զօրքը և ոստիկանութեան յապուկ գնդեր։ — Կիրակի օրը տեղի ունենալիք ցոյցը մեծ մտատանջութիւն է պատճառում։ Ուրիշ քաղաքներից եկած լուրերը հաստատում են, որ յուզմունքը սաստկանում է։

Պետերբուրգ, 9 | 22 յունուարի

Առաւօտեան 10 ժամին, 15 հազար բանւորս, ահագին խումբ կազմած, շարժուեցին դէպի քաղաքի կենտրոնը, սակայն ահագին զօրախումբը՝ հանդէպ դուրս գալով, փորձեց արգելել։ Կազակների մի վաշտ, սրերը քաշած, յարձակում գործեց։ Բանւորները փոքրիկ խմբերով շարունակում են գնալ դէպի կենտրոնական կէտերը։ Ցների դռները փակ են։ Շատ տներում, ներքին յարկի պատուհանները տախտակով ամրացրած են։ Շարժումը սպառնական կերպարանք է առնում։ Մի քանի թաղերում երթևեկութիւն չկայ այլևս։ Կամուրջները բռնուած են զօրքով։ Յերեկուայ 12 ժամին Ձմերային պալատը տանող գլխաւոր անցքերը ամբողջապէս բռնուած էին։ Ալէքսանդրեան այգու մօտ զօրքը բանւորական խմբի առաջը կտրեց։ Գապօնի, երկու հոգևորականների ուղեկցութեամբ, երևաց պալատական հրապարակի վրայ, որը բանւորների ժամադրավայրն էր նշանակուած ժամը 2-ին։ Շարքերը ստուարանում են։ Կէսօրից 50 րոպէ անցած՝ զօրքը հրաման ստացաւ առաջ քայլել։ Հեծելազօրքը սրերով յարձակում գործեց մօտ 10 հազար ամբոխի վրայ։ Շատ վիրաւորներ կան։ Նուվօրսվի հրապարակի վրայ զօրքը երեք անգամ հրացան արձակեց դէպի բանւորները։ Դարձեալ բաւականաչափ վիրաւորներ։ Ամբոխի գրգռումն ահագին է։ Ուղիղ ժամը 2-ին, ահագին բազմութիւնը շարժուեց դէպի Ձմերային պալատը՝ ներս խուժելու և ուղիղ տալու մտադրութեամբ։ Զօրքը հրացանի բռնեց առաջին կարգերը։ 150 հոգի սպանուած, բազմաթիւ վիրաւորներ։ Սրան հետևեց խոշոր ընդհարում զօրքի և բանւորների միջև։ Կէս ժամ յետոյ ամբոխը քաշուեց հրապարակից, և զօրքը շարունակում էր հալածել անզէն խուժանը, անգութ խստութիւնով։ Արիւն և դիակներ շատ փողոցներում։ Ամբոխը թշնամական ցոյցեր է անում օֆիցէրների դէմ։ Բանւորները վճռել են դիմադրութիւն ցոյց տալ Վասիլեվսկի-Օստրովում, ուր բարիկադներ են շինած մի քանի կէտերում։ Վիրաւորները աւելի շատ են, քան կարծում էին։ Գապօնին նոյնպէս վիրաւորուած է։ Լուր է պատում, որ սպանուածների թիւը 2 հազարից անցնում է։ Զօրքը կոտորած է անում։

Լօնդոն, 9 | 22 յունուարի

Քաղաքի զանազան ծայրերից հրացանաձգութեան ձայներ են գալիս։ Մի քանի կէտերի վրայ խոշոր հրդեհներ սկսեցին։ Լուր կայ, որ մի գեներալ մահացու կերպով վիրաւորուել է ամբոխի ձեռքով։ Շատ բանւորներ այժմ դուրս են գալիս զինուած։ „Գերմա“ գործարանը կրակ տրուեցաւ բանւորների կողմից։ Զօրքի ձեռքով սպանուածների մէջ կան և երեխաներ, որոնք խաղալիս են եղել հրապարակի վրայ, նոյնպէս և կանայք։ Երեկոյեան դէմ լուր տարածուեց, որ մեծ իշխան Սերգէյի դէմ սպանութեան փորձ եղաւ։ Ազգաբնակութիւնը ծայրայեղ յուզման մէջ է։ Շատ ընտանիքներ փախչում են Պետերբուրգից։ Պաշտօնական մի քանի շրջաններում այն կարծիքի են, որ սա ընդհանուր յեղափոխութեան նախանշանն է։ Կարևորագոյն դէպքեր են սպասւում։

Պարիզ, 10 | 23 յունուարի

Ցարը Ձմերային պալատումը չէ և շարժման սկզբին արդէն փախել էր Ցարսկոէ-Սէլօ։ Լուր եկաւ, որ կիրակի երեկոյեան ցարը այնտեղից էլ փախուստ տուեց։ Կարծում են, որ կայսրը և կայսրուհին իրենց երեխաներով վճռել են հեռանալ Պետերբուրգից, յեղափոխական փոթորիկներից ազատ մնալու համար։ Կարծողներ կան, որ Նիկոլայ Բ. կ ապաստանի Լիվադիա, կամ գուցէ և փախչի արտասահման։ Մի քանի թղթակիցներ պնդում են, որ սպանուածների թիւը 2,500 է, իսկ վիրաւորուածներինը 8 հազարից աւելի։ Պաշտօնական շրջաններում թագցնում են իրողութիւնը և ուզում են հաւատացնել, որ սպանուածների թիւը 500-ից չէ անցնում։

Պետերբուրգ, 10 | 23 յունուարի

Ապստամբների մի խումբ փորձեց արշաւել դէպի Ցարսկոէ-Սէլօ, սակայն զօրքը նրան յետ մղեց, մի արիւնահեղ ընդհարումից յետոյ։ Շատ բանւորներ սպանուեցին։ Փողոցում պատահած զինւորականների դէմ ամբոխը կատաղութիւն է ցոյց տալիս։ Մէկ գեներալ և մի քանի օֆիցէրներ, որոնք անցնում էին կառքով, դուրս հանուեցին իրենց կառքերից, ամբոխը գոռում էր. „դուք աւելի քաջ էք անզէն մարդոց դէմ, քան Պօրտ-Արտուրի մէջ։ Մարդասպաններ“։ Պայր-Թագուհու պալատն պատուհանները ջարդուեցին։ Լրագիրների խմբագիրները նոր ժողով գումարեցին և վճռեցին գրաքննական իշխանութիւնների առիթով՝ բողոք ուղարկել կառավարութեան։

Պետերբուրգ, 10 | 23 յունուարի

Սրտաճմլիկ են տեսարանները։ Կանայք և երեխաներ ողբում են իրենց նահատակ ամուսիններն ու ծնողները։ Անթիւ տների մէջ տիրում է սուգ։ Հասարակութիւնը միաբերան յանդիմանում է կառավարութիւնը, որ շնորհիւ իր անընդունակութեան և բիրտութեան, խաղաղ ցոյցը դարձրեց ապստամբութիւն և ապա կոտորած։ „Կորչի՜ միապետութիւնը, կորչի՜ պատերազմը“, հնչում է ամէն կողմից։ Այսօրուան օրը մի անկում է կառավարութեան և զօրքի համար։ Շատ տեղ զինւորները հրացանի բռնեցին ժողովրդին՝ առանց նախօրօք զգուշացնելու։ Փրանսիական դեսպանատան առջև մի խումբ անցորդներ՝ կանգնեցրին մի օգոստափառ անձնաւորութեան կառքը, գոչելով. „Մարդասպան, ծունկ չոքիր և ներողութիւն խնդրիր“։ Օգոստափառ անձը հազիւ կարողացաւ փախուստ տալ երեսի թուքը սրբելով։ Մեծ իշխանները փախել են մայրաքաղաքից և ապաստանել Ցարսկոէ-Սէլօ։ Պալատական շրջաններում ուն ուշ հրդ. պնասման է։

Պետերբուրգ, 10 | 23 յունուարի

Մի վաշտ, որին հրամայուած էր ճնշապարհ ընկնել Ռիգա՝ խռռնակութիւնները զսպելու, հրամարեցաւ և յայտարարեցի, որ անկարող է հրացան արձակել ժողովրդի վրայ։ Ցպառնութիւնը զօրեղ է։ Լուր կայ նոյնպէս, որ Ցարսկոէ-Սէլօի մէջ երկուսի փոքր կռիւ են բռնել միմեանց հետ։ Յեղափոխական վարքերի թափանցումը զօրքի մէջ՝ սոսկում է պատճառում կառավարութեան։ Հարաբերական մասնակցողները սկսել էին գոռալ դեղ դինամիտ և ռումբեր։

Մոսկվա, 10 | 23 յունուարի

Ցուզման և գրգռումներ են երևում Մոսկվայի բանւորական շրջաններում։ Պետերբուրգից եկած

լուրերը սոսկում ապրեցին այստեղ։ Բօրսան կանգ է առել։ Երկիւղ են կրում, Նոր ամսի 26-ին մեծ ցոյց տեղի կունենայ։ Տեղական իշխանութիւնը շրջաբերականներ տարածեց՝ հրապիրելով ժողովրդին չհամախմբել փողոցներում։ Գրգռումը կաւելի սաստկացաւ Սեվաստօպոլից եկած զրերի պատճառով։ Սև-Ծովեան Նաւատորմի նաւատիները այնտեղ պատմութիւններ ցոյցեր են սկսել։ Մոսկվայի բանւորները իրենց յայտարարեցին համերաշխ Պետերբուրգի շարժման հետ։ Հինգշաբթի օր սպասւում է ընդհանուր գործադուլ։

Լոնդոն, 11 | 24 յունուարի

Մի քանի լրագիրների հեռագիրներին նայելով՝ Ֆինլանդիայում ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնւում։ Շարժման մասնակից են Սենատի մի քանի անդամներ և ազնւականութիւնը։ Սեստերեցկ՝ 1,800 բանւորներ յարձակում գործեցին կառավարական զինագործարանի վրայ և գրաւեցին մեծ քանակութեամբ հրացաններ։

Պարիզ, 11 | 24 յունուարի

„Ստանդարտ“ նաւը պատրաստ կանգնած է ցարին և իր ընտանիքին, հարկաւոր դէպքում, կոպէնհագէն փոխադրելու համար։ Պետերբուրգում չգիտեն թէ իսկապէս որտեղ է գտնւում կամ ո՞ւր է թագնւած Նիկոլայ Բ.։ Մի քանի օր պալատից պալատ թափառելուց յետոյ՝ թագաւորը այսօր առաւօտեան անսպասելի կերպով մեկնեց Ցարսկօէ Սէլոյից։ Ասում են, որ մտադիր էր ապաստանել Պետերհոֆ, բայց մայրը խորհուրդ տւեց գնալ Գատչինո։ Յեղափոխական շրջաններում՝ Գատչինո փախչելը համեմատում են Լուի XVI-ի Վարէն փախչելու հետ։

Պետերբուրգ, 11 | 24 յունուարի

Արուարձաններում՝ յեղափոխական խմբերը ռումբեր նետեցին զինւորների վրայ։ Ընդհանուր կարծիք կայ, որ եթէ ամբոխը զինւած լինէր, ահագին ջարդ կըտար զօրքին և կ՚աջողէր ձեռք գցել Ձմեռային պալատը։

Լօնդոն, 11 | 24 յունուարի

Երկուշաբթի օր ծանր խառնակութիւններ տեղի ունեցան Լօձի փողոցներում։ Հինգ հազար բանւորներ կարմիր դրօշակ պարզած, պատեցին քաղաքը։ Ոստիկանութիւնը վախեցաւ դիմադրել։ Զօրքը միջամտեց՝ բազմաթիւ վիրաւորներ և սպանւածներ։ Բանտարկութիւններ են սկսւած։

Պետերբուրգ, 12 | 25 յունուարի

Ներքին գործերի մինիստրը հեռագիր ստացաւ, որ Օդեսայում, Խարկովում, Ռիգայում, Սեվաստօպոլում, Կիշինեվում և Ֆարտշավա երկիւղալի յուզում է տիրում։ Սպասւում են բուռն ցոյցեր։ Սարատովում երկաթուղային բանւորները գործադուլ սկսեցին։

Պարիզ, 12 | 25 յունուարի

Լեհաստանի ընդհանուր տրամադրութիւնը գուշակել է տալիս մեծ գործադուլ։ Կարող է պատահել, որ բուռն շարժում սկսի Վարշավայում։

Բերլին, 12 | 25 յունուարի

Ստոկհոլմից ստացած մանրամասն հեռագիրներ հաղորդում են, որ կարևոր դէպքեր տեղի ունեցան Ֆինլանդական մի քանի քաղաքներում։

Պարիզ, 13 | 26 յունուարի

Հելսինգֆորսում 5 հազար բանւորներ գործադուլ սկսեցին։

Էրիվանում բանւորները դադարեցրին աշխատանքները։

Ռիգա՝ ընդհանուր գործադուլ յայտարարւեց։ Մասնակցողների թիւը 80 հազարից աւելի է։

Կովնո՝ արդէն ընդհարում տեղի ունեցաւ զօրքի և բանւորների միջև։

Դորպատ՝ մի քանի հազար մարդկանցից կազմւած ժողովը բողոքեց կառավարութեան դէմ։

Թէոդոսիա՝ մի քանի օրից ի վեր արդէն գործադուլ է յայտարարված։

Յեկատերինոսլաւ՝ բանւորները ցոյց արեցին ոստիկանութեան դէմ։

Կիև՝ սկսւեց բանւորական գործադուլ։

Բերլին, 13 | 26 յունուարի

Պետերբուրգի քաղաքային խորհուրդը վճռեց 25 հազար ռուբլի յատկացնել զոհերի ընտանիքներին։ Դա համարւում է յանդիմանութիւն կառավարութեան հասցէին։ — Յուզմունքը այժմ բանւորներից և ամբոխից անցել է այլ շրջաններ։ Պրոֆէսորների, գրողների, ինչպէս և փաստաբանական շրջաններում գժգոհութիւնը ծայրայեղ է։ Նոյնիսկ կառավարական շատ պաշտօնեաներ բացարձակ տրտունջ են յայտնում կատարւող բռնութիւնների դէմ։

Լօնդոն, 14 | 27 յունուարի

Գեներալ Տրէպովի նշանակումը՝ իբրև Պետերբուրգի քաղաքապետ, բացարձակ իրաւունքով, ծանր տպաւորութիւն թողեց։ Նա համարւում է ընդունակ վերսկսելու Պլէվէի արարքները։ Տրէպով՝ մեծ-իշխանների պաշտպանեալն է և լիազօրութիւն է ստացել՝ ամէն ինչ անել՝ թագաւորական տունը փրկելու համար։ Հաստատւած Ձմեռային պալատի մէջ՝ նա փոքրիկ-ցար է մայրաքաղաքի համար։ Ներքին գործերի մինիստրի իրաւունքները՝ խլած և նրան են տրւած։ Տրէպով յայտարարեց, որ ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնի։ Արդէն մի քանի հազար ձերբակալութիւններ կատարւեցին։ Բռնւած են յայտնի գրողներ, որոնց թւում Գորկի և Աննենսկի, պրոֆէսորներ, իմիջի այլոց՝ Կարէեվ, Հեսսեն։ Մայրաքաղաքից աքսորւեցին շատերը։ Նոյնիսկ բարձր հասարակութեան մէջ սարսափ է տիրում։ Տրէպովի շնորհիւ՝ իշխան Սվեատոպոլկ Միրսկու դէմ նկատւում է մեծ թշնամութիւն։ Պալատական շրջանների կարծիքով՝ այս բոլորը Միրսկու ազատամիտ քաղաքականութեան արդիւնքն է։ Մեծ-իշխանների խումբը ամէն միջոց գործ է դնում որպէս զի ոչնչ զիջումն չ՚անի ժողովրդական պահանջներին։ Որոնում են ներքին գործերի նոր մինիստր՝ Պլէվէի որդի։ Մեծ-իշխան Վլադիմիր սպառնացել է պալատական յեղափոխութիւն անել եթէ Նիկոլայ Բ. թեքւի ազատամիտ ծրագիրների կողմը։

Լոնդոն, 14 | 27 յունուարի

Լրագիրների ներկայացուցիչների հաւաքած տեղեկութիւններին նայելով՝ սպանւածների և վիրաւորածների թիւը մինչև այդ ծրը հասել է 4,000-ի։ Կառավարութիւնը ձգտում է խաբել բանւորներին՝ ասելով, որ եթէ աշխատանքները վերսկսեն, նրանց պահանջներին գոհացնում կը տրւի։ Յեղափոխական ղեկավարները իրենց կողմից ձգտում են բաց անել գործաթողների աչքերը։

Պետերբուրգ, 14 | 27 յունուարի

Լուր կայ, որ կազմված է եակոբինների գաղտնի

կլուբ, մասնակցութեամբ մի քանի ականաւոր մնձանց, որը նպատակ ունի հաստատել ժամանակաւոր կառավարութիւն, եթէ աջողուի գլորել այժմեան բէժիմը։

Պարիզ, 14 | 27 յունուարի

Ցարսկոյէ-Սէլոյում Ցայացու Խորհուրդ՝ կայսերական տան անդամների միջև։ Խորհրդակցութեան ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան թագաւորի և մի քանի մեծ-իշխանների միջև։ Կայսրմէհին յայտնեց, որ ցանկանում է իր երեխաներին մի անպահով տեղ ուղարկել։ Նիկոլայ Բ. աւելացրեց, որ ինքը հանգամանքներին նայած, կամ Լիվադիա կերթայ կամ Դանիա։ Մեծ իշխաններ Վլադիմիր և Ալէքսանդր դիմադրեցին այդ մտքին և նոյնիսկ սպառնացին։ Նրանց կարծիքով՝ թագաւորի հեռանալը ուժ կտայ ժողովրդական շարժման, որ առաջ կը բերի իրենց կործանումը։ Այդ պատճառով մեծ-իշխանները ակնարկեցին, որ կը դիմեն ծայրագոյն միջոցների իսկ իրենց ցանկութիւնը իրագործելու համար։ Պալատական շրջաններում փափուկ կայ, որ նիկոլայ Բ. կարող է սպանուել նոյնիսկ մեծ-իշխանների ձեռքով, եթէ հրաժարուի նրանց կամակատարը լինել։

Պարիզ, 14 | 27 յունուարի

Մոսկվայի մէջ ոստիկանութիւնը կալցրեց պատերին ազգեր, որոնց մէջ ասուած է, թէ ներկայ խառնակութիւնները առաջ են բերել անգլիական գործակալները, եապոնական փողերով։ Այդ զրպարտութեան նպատակն է գրգռել ռուս ամբոխը և դարձնել նրա ուշադրութիւնը դէպի այլ կողմ։ Նոյնպիսի թղթեր կալցրած են մի քանի այլ քաղաքներում։ Վարշավայում անգլիական փոխ-հիւպատոսը վերաւորուեց մի զինուորի ձեռքով։ Անգլիական արտաքին գործերի մինիստր Լորդ Լանսդաուն հեռագրով, ուղղած իրենց դեսպանին՝ Պետերբուրգ, բողոքեց ռուսաց կառավարութեան այս անօրինակ վարմունքի դէմ։ Դեսպանը այդ հեռագիրը յանձնեց Պետերբուրգի կառավարութեան, աւելացնելով մի քանի սպառնալիքներ։ Պետերբուրգից կարգադրութիւն ուղարկուեց գաւառները՝ ոչնչացնել այդ տեսակ ծանուցումները։ Դրա հետ միասին ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը լուր է տարածում, որ ռուսաց յեղափոխական, ազատամիտ և սոցիալիստական կուսակցութիւնները ստացել են եապոնական կառավարութիւնից 18 միլիոն, ներքին խառնակութիւններ առաջ բերելու համար։ Հասարակութիւնը այդ լուրերին կարևորութիւն չի ընծայում։

Հելսինգֆորս, 14 | 27 յունուարի

Զարեքշաբթի երեկոյեան 5,000 բոմբ նկրտի մի ցոյց կազմակերպեցին։ Ոստիկանութիւնը-ցարձակում գործեց։ Շատ վիրաւորներ կան։

Պետերբուրգ, 14 | 27 յունուարի

Նիկոլայ Բ.-ի սպանութիւն լուրը ճիշդ չէ։ Ենթադրութիւն կայ, որ յաջորդ կիրակի օր շարժումը կարող է վերսկսուել, որովհետև յեղափոխականները աշխատում են իրենց ձեռքը առնել գործի ղեկավարութիւնը, մի հանգամանք, որ շարժման սկզբում գոյութիւն չուներ։

Լօնդոն, 14 | 27 յունուարի

Պետերբուրգի քաղաքապետ Տրէպով շարունակում է ձերբակալութիւնները։ Լուր կայ, որ բանտարկեալների թիւը հասնում է հինգ հազարի։ Ձերբակալեալների մէջ կան աւելի քան 150 կանայք։

Պարիզ, 14 | 27 յունուարի

Օգեսայի ծովակալապետը մի շրջաբերականով, ուղղած գաւառներին, յորդորում է հեռու մնալ խռովութիւններից և վերսկսել աշխատանքը։ Պատիկանապետը աւելացնում է, որ գործադուլը օգուտ է բերում միմիայն եապոնացիներին և նրանց գաղտնի գործակիցներին։ Քաղաքացիները կարդում են շրջաբերականը և ժպտում։

Ռիգա, 17 | 30 յունուարի

Վարշավայում նոր ընդհարում տեղի ունեցաւ զօրքի և գործադուլ անողների միջև։ Սպանուեցին 100 հոգի, վիրաւորուածների թիւը 600-ից անցնում է։ Թատրոնական հրապարակի վրայ և վօյա թաղում զօրքը հրացանով դիմաւորեց բանուորներին։ Ձերբակալուած են մօտ 900 հոգի։

Սարատով, 17 | 30 յունուարի

Հաւաքի օր, Սարատովի գիմնազիայի և բէալական դպրոցի աշակերտները հրաժարուեցին ներկայ լինել դասերին։ Եւ երբ նրանք հեռանում էին դպրոցից, կազակները նրանց շրջապատեցին և սկսեցին մտրակներով ծեծել։ Քաղաքացիները անմիջապէս ժողով գումարեցին և բողոքեցին նահանգապետին՝ պահանջելով, որ աւելի մարդավարի կերպով վարուեն երեխաների հետ։

Թիֆլիս, 18 | 31 յունուարի

Թիֆլիսում ապօր գործադուլ յայտարարուեց։ Տպարանները չեն բանում։

Լօնդոն, 18 | 31 յունուարի

Վիտէ յայտնեց եւրոպական թղթակիցներից մէկին, որ ինքը ոչինչ տեղեկութիւն չունի օրէնքի կարգադրութիւններից և մինիստրների խորհուրդ տեղի չէ ունեցել։ Դա համաձայն է ակնարկ այն հանգամանքի, որ այժմ գործերի ամբողջ ղեկը գտնուում է պոլիտական խմբի և Տրէպովի ձեռքում։ Պատասում են, որ ցարի կառավարութիւնը իր խախտած դիրքը ամրացնելու համար՝ կը դիմէ ծայրագոյն խստութիւնների։ Կայսրը միշտ ծարսափի մէջ է պահում և նրան ստորագրել են տալիս բոլոր թղթերը։ Օրօլենկուն առաջարկեցին ընդունել Միրսկուպաշտօնը։ Տիրապետող կարծիքը այն է, որ ցարիզմի գոյութիւնը վերջնականապէս վտանգուած է։ Պատասում են մի քանի կարևոր տեղօրինք։

Պետերբուրգ, 18 | 31 յունուարի

Կառավարչական շրջաններում ահագին տպաւորութիւն է թողնում այն միտքարի հանգամանքը, որ ամբողջ Եւրոպան ցոյց է տալիս յեղափոխական շարժման, և այն խորին տարբերութիւնը, որի առարկան է միապետութիւնը։ Եւրոպական զանազան քաղաքներում կազմուած միտինգների մասին ռուսաց դեսպանները մանրամասնօրէն հաղորդագրում են մինիստրութեան։ Այդ հանգամանքը ստանում է առանձին կարևորութիւն մանաւանդ այն պատճառով, որ բողոքը ժամանակից և հասարակութիւնից անցնում է պաշտօնական շրջանները — պարլամենտարներն ու քաղաքային խորհուրդները։ Կառավարութիւնը ամէն ջանք գործ է դնում, որ լուրերը չթափանցեն կուրսպատկինի զրպարտանքի մէջ, որ պատճառ այն էլ լրջուած է և հաւատը կորցրած։